առաջին եկեղեցին է, որ քառասուն տարի առաջ սարահարթին աւերակները մաքրուած ժամանակ երևան ելած է, և de Vogüé կարողացած է ուսումնասիրել. «Թաբորի վրայ դիզուած աւերակներուն մէջ, կը գրէ ան, երկու եկեղեցիներուն աւերակները կ'որոշուին. անոնցմէ մին շատ հին է և միւսն Խաչակրաց ժամանակ չինուած։ Առաջինը ունի մոզայիքներով յատակ մը, եւ կը կրէ Դ. և Ե. դարերու եկեղեցիներու նկարագիրը. ըստ իմ կարծեաց, չեմ վարանիր ըսելու՝ թէ ան Ս. Երկրի եկեղեցիներուն հնագոյններէն մին է»։ Այս եկեղեցիին արևմտեան դիմացը կը գտնուի փոքր վանք մը՝ որուն աւերակները Խաչակիրներէն աւելի հին են։ Այս վանքին դուռը կը բացուէր եկեղեցիին մէջ, հարաւային կողմէն։ Ինչպէս յայտնի կ'երևի, սոյն դուռը նորոգուած է Խաչակրաց ժամանակ։ Այս եկեղեցիէն դուրս, ըստ Նիկոփոր Կալիքսդի, Հեղինէ թագուհին ի պատիւ Այլակերպութեան չինած է հոյակապ եկեղեցի մը, ինչպէս նաև Թաբոր լեռը ելնելու համար չորս հազար երեք հարիւր քառասուն երեք աստիճաններով սանդուղ մը։ Դէպի արևելք, քիչ մը հեռի, գտնուած են աւերակները երեք նաւով (nef) եկեղեցիի մը՝ որուն երկու կողմերը կան մէյմէկ մատուռներ։ Բացայայտ ապացոյցներ կան թէ սոյն աւերակներու քանի մը մասերը աւելի առաջ են քան լատին յիշատակարանները, և ստուգիւ Զ. դարու հնութիւն ունին։ Այս եկեղեցին ի հարկէ պէտք էր ունենար իր նախագաւիթը, որ Զ. դարուն հաւանաբար գաւիթի վերածուած է. ի հարկէ այժմ ոչէ հետք մը չի տեսնուիր, բայց ապացոյց մը մնացած է։ Եկեղեցիին հարաւային կողմը, գաւթին համապատասխանող տեղէն դուրս, կը գտնուին մնացորդները քառակուսի մկրտարանի մը՝ որ ներսի կողմէն չորս մէթր է։ Յատակը կազմուած է երկչրջանակեայ գեղեցիկ մոզայիքով մը, և ունի կոր գիծերով մէկտեղ սպիտակ, կարմիր և սև խորանարդներ։ Կեդրոնը կը գտնուի մէկ մէթր տրամագիծով առանց մոզայիքի չրջանակ մը, որ մկրտարանին տաշտին տեղն է։ Արդ, հնախօսութիւնը մեզ կը սորվեցնէ՝ թէ եկեղեցիին առաջին վեց դարերուն, մայր եկեղեցիներուն մկրտարանի մատուռը միշտ կը գտնուէր հարաւի կողմը, մերձավայրքի մը մէջ, նախագաւիթէն դուրս և գաւիթէն դուրս։ Մասնաւոր խնամքով մը պահուած է այս աւազանը, նոյնպէս Մովսէսի և Եղիայի եկեղեցիները, ինչպէս կը